



Ս. Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան»
Մատենադարան

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան Մատենադարան»-ի
2013 թվականի գործունեության վերաբերյալ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Անցյալ տարվա հոկտեմբերի 28-ին Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ ստեղծվել է հանձնախումբ նոր գրքերի գնմամբ զբաղվելու համար: Մատենադարանն ունի աշխատանքի երկու ուղղություն՝ գրադարանի համալրում ու ֆոնդերի դասակարգում և մատենադարանի գիտական գործունեություն:

ա) Մատենադարանի գրադարանի համալրում և դասակարգում.

Մատենադարանն այսօր ունի շուրջ 64703 միավոր գիրք, շուրջ 412 միավոր՝ հնատիպ, 22500 միավոր՝ հայալեզու, 31000 միավոր՝ օտարալեզու, 8000 միավոր՝ մամուլ, և հունահայոց համայնքի անդամ տիար զավեն գրիգորյանից նվեր ստացված գրքերը՝ 2791 միավոր: Հաշվետու տարում գրադարանի աշխատանքները հիմնականում ուղղվել են գրադարանի գրքերի քարտագրմանն ու հաշվառմանը, համակարգված և հեղինակային քարտարանների ստեղծմանը: Մատենադարանն աշխատանքների կատարման ընթացքում համագործակցել է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, Հայաստանի ազգային գրադարանի, Ազգային արխիվի, Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ), Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվային բաժնի և այլ գրադարանների հետ:

Մատենադարանի գրադարանն ունեցել է շուրջ 300 ընթերցող:

բ) Գիտական գործունեություն.

Հաշվետու տարում մատենադարանն իր առջև խնդիր է դրել ուսումնասիրել եկեղեցական մատենագրության, եկեղեցական իրավունքի, Եկեղեցու պատմության, եկեղեցական արվեստի, Եկեղեցու պատմական աշխարհագրության, ծիսագիտության, աստվածաբանության բնագավառներին առնչվող հիմնախնդիրները: Մատենադարանի տնօրեն Արժանապատիվ Ս. Արարատ քահանա Պողոսյանը, համագործակցելով Հանրագիտարանների խմբագրության հետ, հողվածներ է գրել Ս. Էջմիածնի տպարանի և «Էջմիածին» ամսագրի մասին, որոնք պետք է հրատարակվեն Հայ գրատպության 500-ամյակի առիթով լույս ընծայվող հանրագիտարանում:

Մատենադարանի տնօրենն է արժանապատիվ Ս. Արարատ քահանա Պողոսյանը: